

ՇՏԵՄԵՐԸ

ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԵԸ

ՀԵՏՈՐ 7:

ՄԵՐՏ 1. 1854:

ԹԻԻ 75:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՆԻԹՈՑ

Լստուածեանի մը խոստովանութիւնը . Երեւ . 33 : Աշխատասէր եղեր . Եր . 35 : “Բու տանդ մէջի եկեղեցին” . Եր . 36 : Քրիստոսի համար տրուած ընծաներուն արժէքը . Եր . 37 : Չինաստանի յեղափոխութիւնը . Եր . 38 : “Ես կորսուած մարդ մըն եմ” . Եր . 42 : Հարուստ աղքատ մը . Եր . 43 : Հնդկաստանի մէջ աւետարանական օգնական մը . Եր . 43 : Կանանց զուարթ բնաւորութիւնը . Եր . 44 : Վագրի մը պատմութիւնը, տղայոց համար . Եր . 44 : Ընհաւատի մը դաւանութիւնը . Եր . 45 : Երազ . Եր . 46 : Լէրան և մուրացկանը . Եր . 47 : Հրէական առած մը . Եր . 47 : Պատանեաց խրատ . Եր . 47 : Պերեգմանին բազմամարդութիւնը . Եր . 47 : Պզտիկ բաներ . Եր . 48 : Հանկ նորատիպ գրոց . Եր . 48 :

ԱՍՏՈՒԱԾԵԱՆԻ ՄԸ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Բանիբուն աստուածեանի մը հետ 1848ին ծանօթացայ, իր նեղութեան մէջ եղած ատենը տեսութիւն ընելով հետը : Գաւազան խօսակցութիւններ ընելով՝ քիչ մը իր պատմութիւնը սորվեցայ : Իր հայրը աստուածեան է եղեր և անանկ մեռեր է . և ինք ալ տղայութենէ կրցածին չափ կարգացեր է, որ իր միտքը անհաւատութեան մէջ հաստատէ : Ըմենէն երեւելի անհաւատ հեղինակներուն գրուածոցը պարսպած էր . աստուածեանութեանը պաշտպան եղող հռչակաւոր անձանց ձառերը անխափան մտիկ ընելու շատ յօժարամիտ եղեր էր . և աս կերպով աստուածեանութեան կարծիքներուն և վիճաբանութիւններուն մէջ յառաջադէմ եղած էր : Ըսոնցմէ զատ յտակամիտ մարդ մըն էր ինքը, բնազանցական բաներու յարմար միտք մը ունենալով : Ըղէկ գիտէր թէ ինչպէս անհաւատութեան վրայ վիճելու է : Սէկը չէր կրնար անոր հետ խօսակցիլ, և անց ասոնց փորձը անձամբ առնելու : Գիւրաւ կրնար գտնալ և ցոյց տալ, իր կարծիքներուն դէմ յառաջ բերուած ձեռնարկութեանը տկար կողմը : Վիճաբանութեան մէջ հանդարտ

էր, և իր տուած պատասխաններուն մէջ ալ չափաւոր :

Օր մը իր գործին մէջ գտայ զինքը, բայց շատ խորունկ մտածմունքի մէջ էր իր միտքը : Սովորական բարեւէնները լմնցընելէն ետեւ, իր խօսակցութիւնը այսպէս սկսեց՝ որն որ կարելի եղածին չափ բուն իր խօսած կերպովը պիտի պատմեմ :

« Պարոն Ֆ — . Բու և իմ վրայովս խորհրդածութիւն ըրի ես, և անանկ կը կարծեմ որ դուն երջանիկ մէկն ըլլալու ես . քու կրօնքդ պէտք է որ քեզ երջանիկ ընէ : Ես՝ երկու սիրուն զաւակներս թաղեցի, ու անոնք «բէ՛ր պէ՛» թաղեցի : Ես կը հաւատամ որ նորէն անոնք տեսնելիք չունին, վասն զի անոնք «բէ՛ր պէ՛» պիտի գոչէին . «Իրե՛ս» . ասոր մէջ խիստ տխուր բան մը կայ : Բայց դուն յարութեան մը կը հաւատաս, որ քու զաւակներդ ուրիշ աշխարհի մը մէջ պիտի տեսնես : Ըսիկա քեզ երջանիկ ընելու է : Երանի՛ր թէ քեզ պէս ես ալ Լստուածաշունչին հաւատայի » :

Ըսոր ես պատասխան տուի թէ՛ ես հոգիս կենդանացնող միջնորդութիւն մը վայելեցի մէկ սիրուն զաւակս կորսնցունելով գերեզմանին մէջ զնելու, որուն պատկերը շատ անգամ դիմացս կու գար . գիտնալով որ՝ ես ան աղջիկս ուրախալի յարութեան մը հաստատուն և ստոյգ յու-

սովը թաղեցի . և Մատուծոյ ճրի շնորհքովը ես յոյս ունիմ անիկա երկինքը վերըստին տեսնելու :

Ինքը նաև ինծի պատմեց թէ՛ ինք կը կարգար, կ'աշխատէր, ու կ'աղօթէր Մատուծոյ՝ որ Սուրբ Գիրքին աստուածային ներշնչութեամբ ըլլալուն վրայ զինքը համոզէ : Հատ հոգ կ'ընէր իր ողջ մտայած զաւակներուն կրթութեանը վրայ, ու անոնք Քրիստոնէից զարատունը կը խրկէր : Ահա ասանկ էր ան մարդը, ասանկ էին իր պաւաղաները, ու ասանկ էր իր խոստովանութիւնը :

Խորհրդածութիւն ընելու վարժուող մտքիմ, աս հասկացաւ և իրմէն լսահասկառ խոստովանութիւնը, շատ խորին մտածութիւններ պիտի յառաջ բերէ : Սենք՝ անոյմէ միայն մէկ քանին յառաջ բերենք հոս :

1. Լսոյս-աշխատանք-ընելու ու Քրիստոնէ-ութեան ներգործութեանցը մէջ ինչ պարբերութիւն ըլլաւ : Սէկը միտքը կը նուաւ տացնէ, միւսը կ'աղնուացնէ : Թէ որ ես տղաքս «իբրև որդ» համարիմ, ու ոչ անկէ աւելի բան մը՝ այլ թէ անոնք քիչ մը ժամանակ պիտի ապրին ու յաւիտեանս գերեզմանին մէջ պիտի կորսուին, արդեօք իմ մտքիս հակամիտութիւնը անոնց հետ որդի պէս վարուիլ չպիտի ըլլայ : Բայց թէ որ ես իմ զաւակներս անմահ հասկնէր ճանչնամ, որ մեռնելու պատրաստուելու համար կ'ապրին, ու կը մեռնին որ յաւիտեան ապրին երջանկութեան կամ թշուառութեան մէջ, արդեօք ասանկ գոյութեան մը վրայ խորհուրդ ընելը՝ իմ միտքս չաղնուացնէր, ու արդեօք ես ալ ասոնց համեմատ չեմ կրթել անոնք : Չէ՞ որ մէկ կողմէն մտածելով՝ անոնք անբանի կը նմանցուին, և միւսով ալ հրեշտակաց : Սէկը երկրի, և միւսը երկինքի :

2. Լսոյս-աշխատանք յայտնութեան զսպանակ մէջ հաստատան հիմք ըլլալ, որուն վրայ յարգոյս հաստատութիւն : Են մարդը՝ որ ասիկա կը նետէ, խարխիւր ծովը նետողին պէս է : Իր միտքը որչափ ալ որ ուշիմ ըլլայ՝ ամէն հոլին խաղալիկ կ'ըլլայ, ամէն կողմանէ երկրայութեանց ու զփուարութեանց ենթակայ : Ասանկ էր ան աստուած-

եանին վիճակը՝ որուն խոստովանութիւնը հիմա պատմեցինք : Աս խորհրդածութիւնը շատ անգամ միտքս եկած է անհաւատներուն հետ խօսած ատենս, ու անոնց դրուածները կարգաւ առնես : Ենոնք ամէն բան անհաստատ վիճակի մէջ կը դնեն : Բայց բան մըն ալ չեն հաստատեր : Ենոնք նայելով գաղտնիք և երկրայութիւնը ամէն բանի մէջ շրջափակուած են : Ենոնց միտքը աս վիճակին մէջ է, և սա մեծ խնդիրներուն մէջ կ'ամփոփի : «Բայց ո՞վ գիտէ» : «Այս ինչպէ՞ս կրնամ գիտնալ» : Բոլորը անտոյգ է : Ենոնք բանը կործանել է. քակել, չէ թէ շինել . Քրիստոնէութիւնը արմատէն խլել, ու տեղը բան մը հաստատել : Աշխարհիս մէջ ամենէն յստակ խելքի տէր մարդիկը աս բանը զգային, ու աստուածային յայտնութեան մը կարօտ ըլլալը ճանչցան :

3. Լսոյս-աշխատանք-ընելու ընդհանուր լիարժեք : Թոյնին՝ մտքին վրայ ունեցած ազդեցութիւնը, մարմնոյն վրայ ունեցածին չափ մահացուցիչ է և աւելի տեղափոխ : Աս մարդը՝ ասոր ճշմարիտ ըլլալը հասկըցաւ, և կ'աշխատէր որ ինքզինքը առ իրեն ծածկ բարոյական թոյնէն ազատէ . բայց աւա՜ղ որ չէր կրնար : Թեղ ուրեմն ծերերն ու պատանիները՝ աս բարոյական թոյնը գործածելէն մէկդի քաշուին, ինչպէս որ արիոնէն կամ ուրիշ մահացուցիչ թոյնէ մը կը փախչին . մէկը ինչ ազդեցութիւն որ ունի մարմնոյն վրայ, միւսն ալ հոգւոյն վրայ ունի : Կրնայ ըլլալ որ հաճելի ըլլայ . բայց վերջը կործանում է : Չէ թէ մոլորութիւնը՝ ճշմարտութեանէն աւելի զօրաւոր է, այլ՝ շատ մարդ, և մասնաւորապէս պատանիները անհաւատութեանը կողմանէ գրուած մէկ երկու գիրք կարթալով՝ անոնց ըսածները իրենց զգացումներուն հետ համաձայն կը գտնեն, և չեն մտածեր բնաւ Մատուծաշուքին և անոր ներքին կամ ուրիշ ապացոյցներուն վրայ, թէ անիկա Մատուծմէ է : Ճանչնողներէս մէկը՝ վեց անհաւատի հետ տեսութիւն ըրաւ . և երբոր անոնք սկսեցին զանգատիլ և Սուրբ Գրոցմէն սխալ վկայութիւններ յառաջ բերել, հարցուց անոնց որ ան տեղերը բանան ցոյց տան . բայց անոնց մէկն ալ

Լստուածաշունչ մը չունէր որ աս բանը ընէր : Թէ որ բոլոր աս տեսակ մարդոց վրայով տեղեկութիւններ ժողովէնք, տարաւորայ չկայ որ ընդհանուր կանոն մը եղածի պէս պիտի գտնենք աս բանը թէ՛ աստուած եանները ինչ որ գիտեն Լստուածաշունչին վրայով, անոր սատիկ թշնամիներուն գրուածոց մէջ գտածներնին է : Ընհաւատութեան գաղափարները՝ իրենց զանազան ձևերովն ու միջոցներովը, ժամանակիս մեծ վտանգն են : Ո՛հ աս թոյնը առնելու ետեւէն մի ըլլար . անիկա քու հոգեւոյդ մէջ կրնաս մտցնել, բայց թերեւ բնաւ չլըրնաս դուրս հանել անկէ :

4 Ընհաւատութիւնը ի՛նչպէս անգործ է : Ընհաւատիկ գլխաւ հայր մը իր երկու սիրական զակընները կը թողէ : Ի՛նչպէս ցաւալի է անոնցմէ բաժնուիլը : Ի՛նչպէս տխուր է աս զրկուիլը : Բայց Քրիստոնէութիւնը՝ երկինքէն եկած հրեշտակի մը պէս, առաջ կ'անցնի և վափուկ կերպով մը ականջն 'ի վար կը վափսայ, «Ո՛ր լար : Ընոնք 'ի Քրիստոս կը ննջեն : Ընոնք չմեռան, բայց քեզմէ յառաջ գացին : Շնորհաց միջոցովը անոնք պիտի տեսնես փառաց մէջ, ու ալ բնաւ չպիտի բաժնուիս» : Ո՛հ ինչ մխիթարութեան բաժակ մըն է ասիկա զաւակներնուն զրկուած ծնողաց համար, երբ որ ցուրտ գերեզմանին վրայ՝ իրենց վերջին տխուր նայուածքը կը դարձնեն սիրուն զակըններնուն վրայ : Բայց անհաւատութիւնը կարծր սիրտով մը, որն որ մահուան չափ պաղ և անգութ է՝ վեր կը ցատկէ ու աս մխիթարութեան բաժակը անոր շրթունքէն վար կը ձգէ, կը կոտորտէ, և կ'ըսէ . Ըսոնք բոլորը շինծու բաներ են, սուտ են : Ընոնք մէկմ' ալ պիտի յարութիւն չառնեն, այլ չիք պիտի ըլլան, ու «որդերու պէս պիտի փատին» : Ո՛հ, անհաւատութիւն . ի՛նչպէս անգութ ես դուն զաւակնուն զրկուած ծնողացը՝ որ անոնց զրկուած ու ցաւած սրտին մխիթարութեան վերջին կաթիլը անգամ կը թափես :

5 Քրիստոսի Լստարանը հարցոց ի՛նչ մեծ Բարիք հըն է, իր բուն թշնամիներուն խօսքին նայելով ալ : «Քեզ երջանիկ կ'ընէ» կ'ըսէ աս անկեղծ աստուածեանը :

Երբ՝ Քրիստոսի Լստարանը՝ մարդոց աս կեանքիս և յաւիտենականութեան մէջ ունենալու երջանկութեանը համար փառաւոր հիմ մը կը դնէ : «Յաւիտենական բլուրներուն պէս» հաստատուն հիմ մը . այդ բուն իսկ Լստուծոյ աթոռին պէս . հիմ մը՝ որ յաւիտենական իրաւանց սկզբունքին վրայ շինուած է, Լստուծոյ ամփոփոխ խորհրդովն ու զիտաւորութիւնովը հաստատուած, և իր Որդւոյն արեամբը շաղախուած, Լստուածաշունչին միջոցովը մեղի յայտնուած, զարծի եկած ատեննիս շողոյն Որդոյ ձեռքը մեղի հաղորդուած, և որուն բովանդակ վայելքը երկինքին մէջ պիտի կատարուի : Ո՛վ ընթերցող արդեօք անհաւատ մըն ես դուն : Քրիստոնէութեան խնդիրն երկու կողմն ալ աչքէ անցուր, և աղօթք ըրէ Լստուծոյ որ քեզի առաջնորդէ : Ի՛նչ բանի օգուտ կ'ընէ անհաւատութիւնը՝ նեղութեան առտենը և մահուան ժամուն մէջ :

Լստուածաշունչին կը հաւատաս, բայց զարծի եկած չե՞ս : Շնորհք ըրէ՛ որ քեզ թախանձեմ մէկէն 'ի մէկ Քրիստոսի արեանը միջոցովը փրկութիւն փնտռելու, և «գալու բարկութենէն փախչելու» : Քրիստոնեայ մըն ես : Շնորհակալ եղեր ա՛նոր՝ որ քեզ խաւարէն՝ Լստարանին սրանչելի լուսոյն կանչեց : Ո՛րչափ երախտապարտ ես դուն Տէրօջը :

ԼՇՈՒՏԱՆԵՐ ԵՂԵՐ : Լս խօսքով ըսել չենք ուզեր թէ միայն ձեռքով աշխատէ՛, բայց յաւատեութիւն ըրէ ինչ բանի որ ձեռք զարնես . և միայն ան է վերջապէս յաջողելու ապահով եղանակը գտած ըլլալուդ նշանը : Բնաւ միտքդ կամ մարմնդ անշարժ մի՛ թողուր . այլ գիտցիր որ շարժման մէջ ըլլալը, թէ մտքիդ և թէ մարմնիդ առողջութեանը հարկաւոր է : Միշտ մէկ աղնիւ նպատակ մը ունեցիր առջեդ, ինչ բանի որ ձեռք զարնես . աս բանը միտքդ բերելով թէ՛ աղէկ նպատակի մը հասնելու համար ըրած ջանքերդ թէ որ չյաջողին ալ, գէշ բան մը ընելու յաջողութիւն գտնալդ աւելի պատուաւոր է միշտ :

“ԲՈՒ ՏԱՆԴ ԴԵՋԻ ԵԿԵԼԵՑԻՆ”

“Քու տանդ մէջի, Կամ անոր Կամ իրենց և Կամ անոնց տանը մէջի եկեղեցին”, անանկ զրուցուածք մըն է որ՝ Պօղոս Ըռաքելոյն թղթոցը բարեկներուն մէջ չորս տեղ յիշուած կը գտնենք : Եսոր ճիշդ իմաստը ինչ ըլլալը ապացուցուելու տեղը հոս է, բայց կ'արժէ որ գոնէ քանի մը խօսք ըսենք ասոր վըայով :

Եկեղեցի բառը թէ և Յունական լեզուին մէջ մարդոց ժողով մը կը նշանակէ՝ թէ քաղաքական ըլլայ, թէ ընկերական և կամ թէ կրօնական, սակայն քրիստոնէական գործածութեանը նայելով՝ ասոր նշանակութիւնը Քրիստոսի հաւատացողներու որ և իցէ թիւ մը ըսել է, որոնք ուխտով կը միանան Եստուծոյ երկրպագութիւն ընելու և անոր սահմանադրութիւնները մէկտեղ պահելու : “Եմանութիւնով, եկեղեցի գումարուած տեղին շինուածքին՝ աս նոյն անունը կը գործածուի : Իրաւ է որ աս անունը Սուրբ Գրոց մէջ բնաւ մէկ տեղ մը աս մտքով գործածուած է. ան պատճառաւ որ՝ Քրիստոնէութեան ան առջի ատենները, որ ատեն որ դեռ Եստուածաշունչին վերջին մասը գրուած լմնցած էր բոլորովին, Քրիստոնէական պաշտամանց նուիրեալ զատ շէնք չկար տակաւին :

Փիլիմոնին, “Կիմիասին, Եկեղասին տանը մէջ եկեղեցին ի՞նչ բան ունի : Կամ ի՞նչ մտքով աս յիշեալ անձանց որ և իցէ մէկուն տունը եկեղեցիի տեղ կրնայ ըլլալ : Եհա աս է հարցուելը բանը : Եսոնց իրեք պատասխան կը տրուի : Ըռաքին՝ թէ բոլոր ընտանիքը մէկ եկեղեցի մը կը կազմէին : Երկրորդ՝ թէ կրօնական ժողով մը եկեղեցի կ'ըսուէր : Երրորդ՝ թէ կանոնաւոր կերպով կազմուած եկեղեցի մը՝ իր անդամոցը մէկուն տունը կը ժողովուէր հրապարական պաշտօն մատուցանելու : Եւ այս երրորդ պատասխանը ամէնէն յարմար կերեայ :

Թիէ որ “Քու տանդ մէջի եկեղեցին” Ըռաքելոյն նամակը ուղղուած անձին ընտանիքը կը նշանակէ, ի՞նչու ուրեմն աս տեսակ եկեղեցիները այնքան քիչ յիշուած են : Քաղաքներու և գաւառներու մէջ՝

շատ տեղ կը կարծանք որ եկեղեցի կային : Ի՞նչու համար Լիգիային և Ստեփաննսին և ուրիշ շատերուն ընտանիքը ասանկ պատիւի մը չարժանացան : Ի՞նչու համար Քրիստոնէութեան առջի ատեններու պատմութեան մէջը նոյն բառը աս մտքը գործածուած չէ : Եսկէ զատ Եկեղասին և Պըրիսկիղային տանը մէջի եկեղեցիներուն բարե գրուած է, որ ատեն որ իրենք անձամբ հոն ալ չէին. այլ Խտալիայի մէջ՝ Հռոմ գացած էին : Հրէաները շուտով Հռոմայէն վճնտուեցան. և ան միջոցին Եկեղասն ու Պրիսկիղան Կորնթոս փախան՝ Յունաստանի մէջ. և աս տեղը Պօղոս Ըռաքելոյն ալ իր առժամանակեայ բնակութիւնը անոնց տանը մէջը հաստատեց, և անոնց արուեստը կը բանէր : Երեք տարուան միջոցին, Պօղոս Ըռաքելոյն Կորնթոսի մէջ աս նոր կազմուած եկեղեցիին գրելու ատենը, Փոքր Եսիայի մէջէն՝ Եփեսոսէն կը խրկէ Եկեղասին ու Պրիսկիղային եռանդուն բարեկները, “Իրենց տանը մէջի եկեղեցիով մէկտեղ” : Ի՞նչ եկեղեցի է աս. նոյն է՝ աս ալ արդեօք Հռոմայի մէջ եղածին՝ որուն վըայ բնաւ յիշատակութիւնը չըլլար անկէ աքսորուելէն ետեւ Կորնթոս եղած ատենին. և կամ՝ նոր եկեղեցի մը կազմուած է իրենց ընտանիքին մէջ : Տղաք ըսեն, չկայինի պէս կ'երեւայ բանին պարագաներուն նայելով. ծառաներ ալ ըսես, իրենք աղքատիկ մարդեր էին՝ արուեստին ալ վըան չէնող : “Կիմիասին վըայով բան մը չենք գիտեր : Եզնուական Փիլիմոնն որ ըսես՝ այնչափ յայտնի չերեւար թէ իր տանը մէջի ծառաները եկեղեցի կազմած չըլլային, թէպէտ և գող տղէկ մը, Ռնեսիմոս, ասանկ աղէկ տէրոջ մը քովէն փախած էր :

“Քու տանդ մէջի եկեղեցին” թէ որ պարզապէս աղօթքի համար մէկ քանի ընկերներուն մէկտեղ գալը նշանակէ, չկրնար աղէկ ապացուցուիլ. որովհետեւ եկեղեցի բառը աս մտքը առնուելու հաստատ հեղինակութիւն մը չկայ : Ես կերպով եղած ընկերութիւն մը՝ մէկմէկու հետ փոխադարձ ուխտ մը չունենար. և կրնայ ըլլալ որ՝ իբրեւ մասնաւոր անհատ, զանազան տարբեր եկեղեցիներու անդամ ըլլան : Արդեօք աս կերպով վերնատունները ու

տունէ տուն ժողովուած միլիոնաւոր փոքրիկ ժողովակները կրնայ եկեղեցի ըսուիլ :

Բայց կանոնաւոր կերպով կազմուած եկեղեցի մը՝ որ հիւրասէր անդամին մէկուն տունը կը ժողովուի, Եստուծոյ Խօսքին քարոզութիւնը լսելու և Տէրոջը սահմանադրութիւնները կատարելու, կրնայ իրաւամբ «անոր տանը մէջի եկեղեցին» ըսուիլ: Ե՛հա աս է եկեղեցի բառին հարազատ գործածութիւնը. Քրիստոնէից ժողովք մը՝ որ կը միանան ուխտով Եստուծոյ պաշտօն մատուցանելու և իրենց հոգեւոր շինութեանը համար: «Երեսնի Քրիստոնէաները» ան ատենուան բոլոր հասարակութեանը պէս, աղքատ անձինք էին ըստ մեծի մասին: Ընոնք հասարակաց պաշտամունքի համար մեծամեծ շէնքեր կառուցանելու կարողութիւն չունէին: Եւ միշտ ալ հալածանքի ու տեղէ տեղ փախչելու ենթակայ ըլլալնուն, հաստատ բնակութիւն մը անգամ չունէին: Հրէից ժողովարանները և հեթանոսաց մեհանները, Քրիստոնէից պաշտօն մատուցանելու տեղեր չէին: Տարիներ անցնելով՝ սորվեցան թէ ի՞նչ է դուրսը բաց տեղ մը, գետի կամ ծովին եզերքը, ձորերուն և թաւուտ մացառներուն, այրերու և քարանձաւներու մէջ Եստուծոյ պաշտօն մատուցանելը: Ու երբոր խղճմանքի և Եստուծոյ պաշտօն մատուցանելու ազատութիւնը վայելեցին, շատ շնորհակալ եղած պիտի ըլլային Կիրակիէի Կիրակի տունէ տուն ժողովուելու: Թէ որ եղբայրներէն մէկը մեծկակ տուն ունենալով անոնց գործածութեանը համար իր դուռը բանար շարունակ՝ ասիկա կ'ըսուէր անոր տանը մէջի եկեղեցին. թող անոր անունը ինչ կ'ըլլայ ըլլայ, Փիլիմոն, Երիմփաս, կամ Եկիւղաս: Օրնեալ է ան բարեպաշտ տունը: Երջանիկ են ան հայրերը՝ որոնք Երեւոյսին պէս Տէրոջը Տապալակը իրենց տունը կ'ընդունին: Ինչպէս որ Սուրբ Գրոցմէջ յիշուած է. «Եւ Եստուծոյ տապանակը՝ Երեւոյսին քովը՝ անոր տանը մէջ իրեք ամիս մնաց. ու Տէրը Երեւոյսին տունը ու անոր բոլոր ստացուածքը օրհնեց»: (Ծ Երեւ. Ժ. 14.) Խաղաղութեան դռներ են անոնք՝ որոնցմէ Եստուծոյ պաշտօնները և ժողովուրդը կը մանն:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԱՐ ՏՐՈՒԱԾ ԸՆԾԱՆԵՐՈՒՆ ԱՐԺԵՔԸ

Երեւոյսի քարերով զարդարուած շէնքի մը մէջ բազմութիւն մը հաւքուած էր: Ամէն կարգ մարդոյմէ կար հոն. ազնուականն ու վատազգին, հարուստն ու աղքատը, փարիսեցին ու մաքսաւորը: Ընոնք իրենց ընծաները գանձանակը կը ձգէին: Հարուստներէն շատերը շատ ձգեցին: Ու մանք յառաջ կ'երթային հպարտ ու գոհ գեմքով մը, քանզի կը սիրէին մարդոց տեսնուիլ: Բայց հիմա մէկ կին մը կը մօտենայ անանկ հազուատով մը որ՝ կը ցուցնէր Թէ աղքատութեան հետ շատ երկար տեսնէ ի վեր սերտ ծանօթութիւն մը ունէր: Ըն ալ իր ընծան կը ձգէ: Ու մէկն ալ կայ կայնա՞ծ՝ որ ամէն մէկուն տուած գումարը յակնէ յանուանէ կրնայ զրուցել. ու աս կնկանը ետ դառնալուն՝ իր բոլոր փէքը եղողներուն ուշադրութիւնը անոր վրայ զարժնել կուտայ, ու կ'ըսէ անոնց որ՝ աս աղքատ որբուարին բոլոր միւսներէն աւելի ձգեց: Եւ ի՞նչ էր իր ընծան որ հարուստ և ազնուական անձանց տուած ընծայէն աւելի գերազանց եղաւ: Ընդուական ծնողքներէ ժառանգութիւն մնացած հազուադէպ գոհար չէին. երկար ու զգուշաւոր կերպով համբարուած ոսկիի գանձ չէին. միայն երկու ճնճղուկ ծախու կըրնար առնուիլ անով: Բայց տակաւին Ըն՝ որուն վճիռները այնպէս ուղիղ են որ ինքը մեռելներուն և կենդանիներուն Դատաւորն է սահմանուած, իր բերնովը կ'ըսէ Թէ ան՝ ամէնէն աւելի տուաւ: Ընոր երկու լուման, ընծաներուն երկինքի մէջի համարմունքին նայելով, բոլոր ան հարուստներուն տուած ազնիւ ընծաներէն աւելի կ'արժէր: Սե՛ծ պարգևները՝ որ անոնք իրենց առատութենէն կը ձգէին, լուութեամբ կ'անցնին. անոնք միայն անցնող ժամուն փառքը կ'ստանան. բայց ինչոր ան կինը իր աղքատութենէն տուաւ, երկինքին Տէրոջը խիստ գովութեանը կ'արժանանայ և բոլոր աշխարհի մէջ մնալուն անուն կ'ստանայ:

Եւ տեղ մեզի խիստ օգտակար դաս մը չկայ արդեօք սորվելիք: Չը՞կրնար ասկէց

խմացուիլ թէ՛ որո՞նք ընծան փրկչին մասնաւոր ուշադրութեանը արժանի կ'ըլլայ, և որո՞նք առատօրէն պիտի վարձատրին : Չէ թէ միայն բացարձակապէս աղքատներունը, չէ թէ միշտ աղքատներունը, բայց անոնցը՝ թէ՛ հարուստ ըլլան և թէ աղքատ, որոնք անոր սիրոյն իրենց վրայ տիրած զօրութենէն շարժեալ կուտան : Պատճառը ան էր որ՝ ան աղքատ որբւարին այնչափ կը սիրէր այն գանձանակէն հոգացուած գործը, որ ինքը իր անձնական կարօտութեանցը ձայնը մտիկ չըրաւ, ու իր չքաւորութենէն ձգեց բոլոր իր ունեցած ապրուստը : Քրիստոսի վրայ եղած սաստիկ սէրը՝ նոյն կերպով անձնուրացութեան կ'առաջնորդէ. ու աս մտօք եղած ընծաները, աշխարհքս անցնելէն ետեւ ալ պիտի հռչակուի ՚ի պատիւ անոնց որ տուին :

Աս տրուելու նուէրը՝ շատ երեւելի և կարեւոր բան մըն է : Այսօր տակաւին հիմա ալ գանձանակին զիմացը կը նստի, ընծաները բերուելու ատենը : Իր աչքը կը տեսնէ թէ հարուստները իրենց աւելորդին որ մասը կը ձգեն, ու աղքատները իրենց ապրուստէն որչափ կը բերեն. և անոնց համաձայն ինքը կը հաւնի կամ չհաւնի : Կրնայ ըլլալ որ մարդոց մէջ փող հնչուի մէկ ընծայի մը վրայօք թէ շատ առատաձեռն մէկ պարգև մըն է, և սակայն փրկչին առջեւ ան ընծան տուողին սիրտը իր վրայ որչափ պաղ ըլլալը ցուցնէ : Մէկ ընծայ մը կրնայ ըլլալ որ շատ ամօթ սեպուելուն համար ծածուկ պահուի, անիկա տուողին կարողութեանը այնչափ անհամեմատելի ըլլալուն համար. բայց չը կրնար անկէ պահուիլ, որուն՝ անոր վրայով ունեցած համարումը, անսահմանաբար՝ աւելի նկատման արժանի է՝ քան թէ բոլոր ուրիշներունը մէկ տեղ առնելով : Ընծայ մը՝ կրնայ ըլլալ որ տրուելու անձին արժանաւորութեանը նայելով, տուողին աչքին ջնջին երևեալուն՝ խպնելով բերէ. և սակայն նոյն ընծան ընդունողը՝ կարելի է որ հրեշտակներուն ուշադրութիւնը անոր դարձնել տայ : Երբոր Քրիստոսի դատին համար տրուած ընծան կը ցուցնէ իրօք որ տուողը անոր համար կ'ապրի, ան ատենը Քրիստոսի շատ հաճելի կ'ըլլայ :

Ընծա որ՝ աս կերպով անոր համար բան մը կը զոհեն, և անոնք որ՝ «իրարու հետ կը խօսին», «անօրը որ՝ իր սեփական գանձը ժողովէ, անոնք իրը պիտի ըլլան» : Մատ. Գ. 16. 17 : Կրնայ մէկը խորհիլ, թէ իրեն հետեւողները՝ ատենակալներուն հետ նստելէն, կամ մեծամեծ վաճառականներուն մէջ ճանցուելէն աւելի անոր թիւէն ըլլալու պիտի շատ ցանկան : Թող ամէն կարգացող ինքզինքին հարցնէ, թէ անոնց կարգէն ըլլալու արժանաւոր եմ արդեօք. կա՞յ կենացս մէջ անանկ մէկ գործ մը՝ որ ան պահանջմունքը ընելու օգնէ : Այսպիսի պահանջմունքներ կրնայ ըլլուիլ յիշաւի, բայց չէ թէ մինակ մէկ գործով մը՝ այլ բոլոր կենացը մէջ շարունակ անձնանուիրութեամբ : Ընծայ գինը հաշիւ ընելու կարող չենք. և սակայն ամէն մէկն ալ կրնայ ընել : Ընծա խիստ շատ աղքատութեան մէջ է, ան կ'ընէ՝ ուրուն բոլոր ապրուստը, բոլոր ունեցածն անգամ՝ զանկի մը հաւատարէ, կրնայ վերին տաճարին մէջ հաւանութիւն գրտնել՝ երկրիս վրայ եղած տաճարին մէջ Այսօր ձեռք տրուած հաւանութեանը պէս :

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Չինաստանի հիմնկուան կայսրը՝ 1850ին աթոռը անցաւ, իր տասն և ինը տարեկան հասակին մէջ : Կայսերութիւնը զարդանալու և յառաջադիմութիւն ընելու վիճակի մը մէջ գտաւ ինքը : Ընդդիպի հետ եղած պատերազմը՝ Չինաստանի կառավարութիւնը մօտեցուցած էր արտաքին քաղաքականութեան և զօրութեան հետ, որոնց գիտութենէն մինչև ցարդ զոհուած էին. և Քրիտանական ղէնքին ուժը՝ պարտաւորեց իրենց ստորնութիւնը հասկնալու, և անոնց վրայ համոզում մը ընելու բռնադատեց որ՝ ուրիշ աղքաց հետ ազատ և բարեկամական հաղորդակցութիւնը, կրնայ շատ օգտակար ըլլալ իրենց : Ընդդիպի, Գաղղիայի ու Մակեդոնի հետ հաստատուած առևտրական յառաջադիմութիւնը հետևապէս, աս իրենց դաշնադրութեանց արդեամբը՝ Չինու

Ժողովուրդը աւելի օտար աղբաց ձեռնարկութեանցը շրջանակին մէջը խօթեց, և աս զարմանալի աղբին պատմութեանը մէջ նոր դարու մը ճամբայ բացաւ : Թէ որ ծաղկահասակ կայսրը դիտնար որ իրաց աս ներկայ վիճակէն ինչպէս օգուտ քաղելու է, և պահելու է անիկա, ու նոր շարժում մը տալու է աս նոր ձեռնարկութիւններու սկսող ոգւոյն՝ որն օր իրեն Ժողովրդոցը մէջ օրէ օր արթննալու վրայ էր : Իր թագաւորութիւնը տարակոյս չկայ որ շատ փառաւոր և երջանիկ պիտի ըլլար : Բայց զժբաղդաբար ասկէ շատ տարբեր խորհուրդներու մտիկ ըրաւ : Եւ հետեւապէս ի գործ դրաւ բոլորովին տարբեր քաղաքականութիւն մը : Իր կայսերութեանը մէջ գտնուած ամենէն խելացի մարդը պաշտօնէն հանեց և անպատիւ ըրաւ : Կորոգութիւն սիրող, ու օտար աղբաց հետ բարեկամական յարաբերութիւններ մշակելու խրատ տուող անձինքները իշխանութիւնէ հանեց, ու անոնց տեղը դրաւ անանկ մարդիկներ՝ որ սաստիկ թշնամի էին աս օգտակար բաներուն : Եւ մարդիկը՝ ինչպէս որ սովորաբար ճշմարիտ կ'ելլէ բոլոր աս տեսակ մարդոց վրայով՝ որոնք օգտակար նորոգութիւններու դէմ կը կենան, կարճամիտ, և տգէտ մարդիկներ էին : Բոլոր կրցածնին ըրին, որ Եւրոպայի ու Ամերիկայի հետ եղած առևտուուն ու հաղորդակցութիւնը աւրին, ու բոլորովին արմատէն փրցընեն արդէն եղած աղբեցութիւնը :

Եւ իրենց վարմունքը՝ հիմակուան թագաւորութեան իշխանութիւնը փճացուց : Հատ տարիներէ ի վեր է որ Չինաստանի մէջ խել մը մարդիք գաղտնի ընկերութեան միաբանած էին՝ որոնց նպատակը ներկայ Մանքու ցեղին իշխանութիւնը կործանելն էր, որ Ժողովուրդին մեծ մասը միշտ բռնի յափշտակուած իշխանութիւն մը կը ճանչնար ասիկա : Բանը այնպէս բերաւ որ աս գաղտնի ընկերութեան մէկ քանի երեւելի անդամները քրիստոնէական կրօնքին մէջ հրահանգուած էին, ու իրենց աս նարբին մէջ մէկէն կրօնական սկզբունք մը մտցուցին, ու անոր տարածմանը և ուժ գտնալուն համար ասիկա շատ զօրաւոր միջոց մը ըրին : Խել մը մարդիկ աս ընկերութիւններուն յա-

րեցան, և նոյն ժամանակը ձգեցին իրենց հին Քրիստոնէոսին վարդապետութիւնները և Պուտա հաստուէոյն երկրպագութիւնը :

Վերջապէս աս գաղտնի դաւակցութեան հնարքները հասունցան, և յեղափոխութեան գաղափարը երևան ելաւ : Եւ գործը յառաջ տանելու կողմանէ ընտրած տեղերնին շատ յարմար էր դաւաճանութիւն ընողներուն համար. և յիշաւի՝ աս դաւակցութեան ամէն մէկ մասը՝ ու նաեւ վերջին պատերազմին մէջ տեսնուած վարմունքը, հաստատեց որ աս շարժմանը առաջնորդը հասարակ մարդ մը չկրնար ըլլալ : Ընանկ կը պատմուի թէ՛ ինքը վախիլու էր դէմքով, միջակ հասակով, ճարտարախօս, ու Չինաց լեզուին գրականութեանը խիստ հմուտ անձ մըն է :

Եւ երեւելի պատերազմը՝ մինչև հիմա շարունակ յաղթութեան և յառաջադիմութեան մէջ կը գտնուի, որ մեր յարգի ընթերցողներէն շատերը արդէն գիտեն՝ անոնց պատմութիւնները աս Տէրութեանը մէջ հրատարակուած լրագիրներուն մէջ գրուած ըլլալով. ապստամբները քաղաքէ քաղաք յառաջ գացին՝ դէմքին ելած բոլոր Մանքու ցեղը անխնայ սպաննելով, և իրենց ու պաշտպանած դատերնուն կողմը յարել տուին Չինաց Ժողովուրդին շտաբը, և անոնց սէրը իրենց կողմը գրաւեցին : Ուր որ գացին՝ կռապաշտական տաճարները, կուռքերը կործանեցին, և տեղ տեղ ալ Քուրմերը սպաննեցին : Յիշաւի ասոնք ցաւալի տեսարաններ են, և բնաւ արդարութեամբ եղած չհամարուի ասիկա որ՝ մէկ կրօնք մը սուրով խափանուի կամ նուաճի, ուրիշ մը անոր տեղը կանգնեցընելու համար : Հոս պէտք է աս ալ յիշուի որ՝ Եւրոպայի մէկ քանի լրագիրներուն մէջ, խել մը չափազանցութեամբ պատմութիւններ եղած են աս բաներուն վրայով :

Թէ որ Հոմարանին սահմանաւոր միջոցը տանելու ըլլար՝ յիշաւի շատ հետաքրքրական բաներ կար պատմուելու աս պատերազմին, և քաղանքները յափշտակուելուն յաջողութեանը, և զօրքին արագ արագ ըրած յաղթական յառաջադիմութեանը վերայօք : Բայց կը պարտաւորինք սահմանա-

և որ միջոցի մը մէջ ամփոփել խօսքերնիս , համառօտ տեսութիւն մը միայն տալով աս շարժմանը բարոյական և կրօնական հանգամանացը վրայօք՝ ըստ որում քրիստոնեայի մը ամենէն աւելի հետաքրքրական նկատմունքը ան կրնայ ըլլալ միայն :

Յեղափոխութեան գլխաւորները՝ քրիստոնէութեան կը հաւտան , և կը մերժեն ամէն տեսակ կռապաշտութիւնը : Եսոնք կ'ըսեն թէ Լեւնակարողէն յանձնուած է իրենց որ՝ մի միայն ճշմարիտ Եստուածգիտութիւնը տարածեն : Կ'ընդունին Եստուածոյ միութիւնը , և Երրորդութեան վարդապետութիւնը . Վրիստոսի քաւչական պատարագովը եղած աշխարհի փրկութիւնը , և Հոգւոյն Սրբոյ ներգործութիւնը : Եւ ուրիշ շատ բաներ ալ կը յարեն իրենց կրօնական նպատակներնուն վրայով , քան թէ իրենց քաղաքականին՝ և իրենք աս բանն ալ կը հաստատեն թէ՝ ժողովուրդը աս կրօնական մոլորութենէն ազատելու համար ըրած ջանքերնին , բռնական իշխանութեան մը ձեռքէն ազատելնէն աւելի օգտակար պիտի ըլլայ :

Ես մարդոց անկեղծութիւնը իրօք կը տեսնուի սա բանէն ալ որ՝ քրիստոնէական բարոյական սկզբունքներով կը շարժին ընդհանրապէս , ու նոյն բանը կը պահանջեն իրենց կարգադրութեանը տակը եղած բանակին բոլոր զօրքերէն՝ անոնց դէմ ընդդէմը սաստիկ պատիժ սպառնալով : Հայհոյութիւն , պղծութիւն , գարշելի խօսքեր , աբիոնի գործածութիւնը և ուրիշ բարոյականի դէմ եղած բաները՝ խիստ սաստիկ կերպով արգիլուած են : Իրենց պատերազմական բանակները գացող տեսնող , կամ անոնց զօրքերուն յափշտակած քաղաքներուն մէջ բնակող Եւրոպացիները՝ զարմանքով կը գրեն անոնց մինչև անգամ հասարակ զինուորները , ամէն մոլութիւններէ կատարելապէս ազատ ըլլալնին տեսնելով : Տասնաբանեայ օրէնքը « Երկնային կանոն » կը կոչեն իրենք , ու անոնց պահպանութիւնը խստիւ կը պահանջուի . և անոնց վրայ աղուոր մեկնութիւններ հրատարակած են իրենք :

Ծանդոց Գիրքը , և Եստուածաշունչին մէկ քանի մասը տպագրել տուած են . և

յայտնի կը ցուցնեն թէ այն Սրբազան Գիրքը ամբողջ պիտի անխտրաբար մատակարարեն բոլոր անոնց՝ որ կրնան կարգաւ . և իրենց բռնած սկզբունքէն կ'երեւայ թէ բոլոր Եստուածաշունչը հրատարակելու գիտաւորութիւն ունին : Եւ և կ'երեւայ թէ շատ հմտութիւն ունին Հին և Կոր Կտակարանաց մէջ եղած պատմութիւններուն վրայօք . և իրենց Տեառակներուն մէկ քանիները խիստ պատուական են . իրենց աղօթքները Յիսուս Վրիստոսի անունովը կը մատուցանեն , և անոր ըրած քաւութեանը կ'ապաւինին իրենց մեղացը թողութեանը , և հոգիներնուն փրկութեանը համար : Եւ բաթը սուրբ կը պահեն . և կը պատուիրեն որ ամէն օր առտու իրիկուն աղօթքնին ընեն :

Հետեւեալ աղօթքները ու երգը օրինակի համար հոս կը գնենք :

ՋԱԶԱՅԵԱԼ ՄԵՂԱՆՈՐԻ ՄԸ ԱՂՕԹԻԸ

« Ես անարժան որդիդ կամ աղջիկդ գետինը կը խոնարհիմ » սրտանց զղջալով իմ մեղացս վրայ . ու քեզի կ'աղաչեմ մեր ամենամեծ Եստուածը ու երկնաւոր Հայրը՝ որ քու անսահման բարութիւնովդ և ողորմութիւնովդ ու գթութիւնովդ ներես իմ առջի ատենուան տգիտութեանս , և քու օրէնքներուդ դէմ գործած անթիւ մեղքերուս . և ջերմեռանդութեամբ կը խնդրեմ քեզմէ որ՝ քու մեծ շնորհքովդ իմ անցեալ մեղքերս ներես , և կարողացնես զիս ապաշխաբելու , և նոր կեանք մը վարելու առաջնորդես զիս՝ որպէս զի իմ հոգիս երկինքը երթայ . շնորհէ որ ասկէ ետեւ անկեղծութեամբ ապաշխաբեմ , և ձգեմ իմ բոլոր չար ծամբաներս . պիղծ ոգիներու (կուռքերու) երկրպագութիւն չընեմ , ու ոչ ալ չար գործքերու մէջ դառնում » այլ քու աստուածային հրամանացդ հնազանդիմ : Եւ և ջերմեռանդութեամբ կ'աղաչեմ քեզի ամենամեծ Եստուած , մեր երկնաւոր Հայրը , որ շարունակ քու Սուրբ Հօգիդ շնորհես ինծի , և իմ չար սիրտս փոխես . ու բնաւ թող չտաս ինծի որ խափուիմ անդգամ դեւերէն , այլ մշտնջենաւորապէս քու շնորհքներդ պարգևէ ինծի և միշտ չարէն զիս ազատես . և շնորհէ ինծի առաջ կերակուր և հանդերձ . ազատէ զիս չարիքներէ ու թշուառութենէ՝ շնորհելով ինծի աս աշխարհիս մէջ խաղաղ կեանք մը , և երկինքի մէջ յաւիտեական երջանկութեան վայելք մը , մեր Վրէկիչ ու երկնային եղբայր Տէր Յիսուս Վրիստոսին արգեամբը՝ որ մեզ ազատեց մեզ :

քէն : 'Եւաե կ'աղաչեմ քեզի ամենամեծ Լստուած մեր Հայրը որ երկինքն ես' որ քու կամքով ըլլայ աս աշխարհիս մէջ, ինչպէս որ երկինքը կ'ըլլայ : Ա՛յ Եւաե հիմա, ու շնորհէ այս իմ խնդրուածքներս որ՝ անկեղծութեամբ քեզմէ սրտանց կը խնդրեմ' :

ԱՌԱՌՈՏԵԱՆ ԿԱՄ ԵՐԵՎԱՆԻՆԻ ԱՂՈԹՔ ՄԸ

"Ես անարժան որդի կամ աղջիկ գետինը խնարհելով քու առջևդ՝ կ'աղաչեմ քեզի ամենամեծ Լստուած, մեր երկնաւոր Հայրը, որ դուն քու ողորմութեամբդ պաշտպանութիւնդ շնորհես ինձի, և քու Սուրբ Հօգիդ միշտ ինձի պարգևես, որ իմ չար սիրտս փոխէ ու բնաւ չթողու որ խաբուիմ ստատանայական աղօթեցութիւններէն . այլ մշտնջենապէս քու շնորհքներովդ աղատէ զիս չարէն, մեր Վրկիչ և երկնային եղբայր Տէր Հիսուսին արդիւնքովը որ մեզ մեղքէն փրկեց : 'Եւաե կ'աղաչեմ քեզի ամենամեծ Լստուած, մեր Հայրը որ երկինքն ես, որ քու կամքով ըլլայ աս աշխարհիս վրայ՝ ինչպէս որ երկինքը կ'ըլլայ : Ա՛յ Եւաե և շնորհէ իմ խնդրուածքներս որ՝ անկեղծութեամբ օրտանց քեզմէ կը խնդրեմ' :

ԿԵՐԱՎՈՐԻ ԱՏԵՆՈՒԵՆ ԳՈՀՈՒԹԻՒՆ

"Շնորհակալ եմք քեզի ո՛վ Լստուած մեր երկնաւոր Հայրը, և կ'աղաչեմք որ դուն մեզի պարգևես մեր ամէն օրուան կերակուրը և հանդերձը . աղատէ մեզ չարութիւններէ և նեղութիւններէ, ու շնորհէ որ մեր հոգիները երկինքը երթան' :

ԱՍՏՈՒԺՈՑ ՓԱՌԱՐԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԳՈՐԺԱԾ ՈՒՅԺ ԵՐԿ ՄԸ

"Արգովեմք Լստուած, մեր Սուրբ և երկնաւոր Հայրը .

"Արգովեմք Հիսուս, Սուրբ Տէրը և աշխարհին Վրկիչը .

"Արգովեմք Սուրբ Հօգին, որ բազան ներգործութիւն ընողը .

"Արգովեմք Երեք անձինքը, որոնք մէկ տեղ ճշմարիտ Լստուած են' :

Եսոնց ու ասոնց նման ուրիշ պատուական բաներու մէջ՝ շատ մըն ալ սխալ և անվայել գաղափարներ մտած են . և նոյն աւտենը որ կը հաւատանք թէ իրենց մէջ կրթեալ և անկեղծ քրիստոնեաներ կը գրաւուին, նոյնպէս ալ տարակոյս չունինք որ ասոնց մէջ շատ մըն ալ տգէտ ու կրօնամոլ մարդիկ ալ կը գտնուին :

Ես ամէն բաներէն գոնէ յայտնի կ'երեւայ թէ՛ ինչ քրիստոնէութիւն որ սորուեցան, բուն Լստուածաշունչէն սորուած են՝ ու չէ թէ մարդոց սուտ ու ապականեալ աւանդութիւններէն . վասն զի իրենք կը հաւատան թէ միայն Հիսուս Քրիստոս հոգին կարող է փրկել . և կը սորվեցընեն որ շիտակ ամէն մարդ Լստուածաշունչէն դիմելու, և անկէց սորվելու, և ողորմութիւն գտնալու համար ալ Լստուածոյ դիմելու է շիտակ . ամենեւին չեն թողուր որ մէկ արձանի մը կամ պատկերի մը երկրպագութիւն մատուցուի, ու ամենեւին գաղափար մը չունին՝ սուրբ և բարեպաշտ կեանք մը վարելու տեղը, ապաշխարանք քաշելու և ուրիշ արարողութիւնները դնել :

Ենկարելի է աս շարժման օգուտները հաշուի առնել : Չինաստանի Այասերութիւնը բոլոր իրեն հպատակներովը մէկ տեղ կը պարունակէ՝ պաշտօնական հաւատարիմ հաշիւներու նայելով 400 միլիոնէն աւելի մարդիկ . և թէ որ յեղափոխութիւնը յաջողի՝ և հաւանական է թէ յեղափոխականները արդէն կայսերութեան մայրաքաղաքին տիրած են, աս ընդարձակ երկրին բազմամարդութիւնը որ բոլոր աշխարհին հետ բաղդատելով մէկ երրորդ մասէն աւելի կը կազմեն, պիտի ազատի ամենահարստահարող բռնական իշխանութեան մը ձեռքէ, ու ամենաթանձր մոլութիւններէ ու խորին կռապաշտութենէ : Լստուածոյ հարազատ խօսքը անոնց ձեռքը պիտի տրուի, և մաքուր քրիստոնէութեան քարոզիչները մարդիկը ամէն տեղ փրկութեան ճամբուն մէջ առաջնորդելու պիտի ազատ ըլլան : Ես սքանչելեաց դարը՝ իրաւ որ տակաւին ասոր հաւատար սքանչելի բան մը չտեսաւ :

Մեր յարգի ընթերցողները վստահ ենք որ պիտի ուրախանան՝ լսելով թէ Մեծին Յրիտանիոյ Լստուածաշունչի Բնկերութիւնը արդէն վճիռ տուաւ մէկ միլիոն (1,000,000) Նոր Ատակարան տպուելու Չինաց լեզուով, և որչափ որ շուտով կարելի է ասիկա իրենց խրկելու պիտի նային : Մասնաւոր ստորագրութիւն մը բացուեցաւ միայն աս նպատակին համար, և արդէն մէկ միլիոն ղուրուշի չափ ստակ ժողովուած է :

“ԵՍ ԿՈՐՍՈՒԱԾ ՄԱՐԴ ՄԸՆ ԵՄ”

Դադղեայի Մարաջախտ ու Եղլիի Դուքս Պիւթօին վերջին խօսքերն աս ըլլալը լրագիրները կը հրատարակեն : Վերոգրեալ խօսքը բերնէն ելած ժամանակը, պայծառ և ինչպէս շատերը պիտի ըսէին՝ օգտակար կեանքի մը ճիշդ վերջին կէտը հասած էր ինքը : Պատերազմի մէջ շատ բանակներու զօրագլուխ եղած էր : Հասնահաններ կարողութեամբ էր : Իր ազգին խորհրդարանին մէջ անուանի եղած էր : Դադղեայի Կախագահը՝ ասոր մահուան սենեակը փափաքանօք այցելութեան գնաց : Երբեք չէր Բալիկեալը՝ իր հին ընկերակցին մահուան գուռը հասած մարմնոյն վրայ նայած ատենը՝ լացաւ, ու իր մահուան լուրը հրատարակուած ատենը՝ աղբային ժողովրդոց վրայ շատ խորին զգացում մը պատճառեց : Եւ բոլոր պատիւները մէկ տեղ ըլլալովն ալ՝ ինքը խոստովանեցաւ անձամբ թէ “Ես կորուսած մարդ մըն եմ” : Ինչ որ լալի անհամաձայնութիւն մը կայ, իր կենաց փառաւորութեանն ու վախճանած ատենի խորին տխրութեան մէջ տեղը :

Նոյնպէս կը յիշուի ալ թէ Պիւթօն մէկ բարեպաշտ մայր մը ունէր : Իր շատ բազմաժտանգ գէպքերով լեցուն կենացը մէջ՝ կ'երևայ թէ մի միայն անկէ իր սրտին վրայ աղէկ ազդեցութիւն առած էր : Միայն իր մօրը ձայնը վտանգէն կը զգուշացնէր զինքը, ու յաւիտեանականութեան վրայով կը խօսէր իրեն . բոլոր ուրիշ ազդեցութիւնները կը ծառայէին զինքը մոլորցնելու : Բանակին մէջ՝ Լստուծոյ անունը միայն հայհոյութեան ատեն կը լսէր, և քաղաքական կենաց մէջ՝ աշխարհային աստիճաններու ու իշխանութեան սաստիկ հետամտութիւններէն իր զատ ուրիշ բան մը չէր տեսներ : Փարիզի պալատներուն մէջ՝ նրբամիտ մարդոց ծաղրաբանութիւնն ու փիլիսոփայից իր պատանեկութեանը կրօնքին հրապարակաւ անարգութիւն տալը կը լսէր . և զինքը զգուշացնող, իրեն հետ աղօթք ընող փափուկ ձայնը, աւաղ իրեն՝ որ այս աշխարհքիս բարբաճող ձայներուն մէջը նուաճեալ ու կորուսեալ էր :

Բայց մահուան ժամուն ատենը՝ աս ձայ-

ներն ալ կը մեռնին ու կը մոռցուին : Բոլոր աշխարհքի գովութեան ձայները՝ չէին կրնար Պիւթօին տկարացած շնչերակին զարնուածքը շուտցնել : Իր ականջին ուրիշ ձայներ կու գար . քանզի ան ձայները՝ որոնց ականջ չէնք տար երբոր մեզ կը խրատեն, շատ անգամ բռնի կը ստիպուինք լսելու, երբոր մեզ կ'ամբաստանեն : Մահուան վայրկեանները՝ շատ անգամ չարաչար գործածուած արտօնութիւններուն, և զանց առնուած շնորհներուն յարութիւն առնելու ատենն է : Ընտել յիշողութեան մէջ թաղուած տեղերէն կ'ելլեն՝ մեր դատարկիքը առաջմանէ ցուցնելու, ու անոր անժխտելի արդարութեանը մեզ համոզելու համար :

Ե՛հ աս կերպով կը բացատրենք այն ահաւոր խօսքը՝ որ մեռնելու վրայ եղող պատերազմականին բերնէն ելաւ : Ընտել ձայն մը միտքը եկաւ՝ որն որ շատոնց մոռցած ու զանց ըրած էր : Ե՛հ չափ տարիներէն ու մըրկալից պատերազմներուն մէջէն՝ յստակ ու որոշ կու գայ իր նուաղեալ ականջին : Կը փնտռէ նախկին խրատներուն պտուղները, և բարեպաշտ խնամքներուն ու ջանքերուն արդիւնքը : Բայց իր մտքովը կենացը վրայ մէկ անգամ մը աչք նետելը, բաւական կ'ըլլայ անիկա վատնած ըլլալը ցոյց տալու : Բուն իր խճմտանքը զինքը կը դատապարտէ, ու անով գիտէ որ Լստուծոյ վճիռը յառաջմանէ կ'զգայ, ու մահուան մէջ կ'ընկըղմի “կորուսեալ մարդ մը” :

Եւ ցաւալից գէպքին ինչ ըլլալը դիւրաւ կը հասկցուի : Եսիկա միայն մէկ նոր օրինակ մըն է ցուցնելու թէ՛ ինչպէս գիւրին է՝ որ անհոգութիւնը մեր ամենէն աղէկ շնորհները անէծքի դարձնէ : Սօր մը սէրը և բարեպաշտական խնամքը՝ Լստուծոյ ողորմութեանը անգին շնորհներն են : Ընտար բերութիւնն ու անզեղ մնալը՝ կրնան անոնց մեր դատապարտութիւնը սաստկացնելու պատճառ ըլլալ . ու ասանկով ան փափուկ ձայնը՝ որ մեր մանկական ատենը կը լսէինք, անանկ կը փոխուի որ՝ մեր մահուան բարձերնուս վրայ յաճախ ամբաստանութիւն ընելով, անանկ կ'երևի որ՝ ոչ ընդդէմ է ինչ ընելով՝ Կրնանք արգիլել, ու ոչ ալ անոր դէմ դնել :

ՀԱՐՈՒՍՏ ԱՂՔԱՏ ՄԸ

Ուրիշ իրիկուան մը դէմ՝ բարեկամիս մէկուն հետ գեղի մը աղքատանոցը գացի . ան տեղ քիչիկ մը կրակ վառած էր : որուն քով ծերունի մարդ մը նստած էր : և ինքը խուլ ու դողդաղացող անդամալոյծ ըլլալուն՝ իր ոտքին ամանը գետինը կը զարնէր անդադար : Բայց թէ և ինքը խուլ : հիւանդ : և անբուժելի էր : բայց տակաւին տեսայ որ շատ երջանիկ մէկն է եղեր : «Ի՞նչ կ'ընես Յակոբ» ըսաւ բարեկամս . «Կը սպասեմ Պարոն» ըսաւ : «Ի՞նչ բանի» հարցուց միւսը . «Իմ Տէրոջս երեւնալուն» պատասխանեց հիւանդը : «Եւ ի՞նչ պատճառաւ կը փափաքիս անոր երեւնալուն» : կրկնեց բարեկամս . « Ընոր համար որ՝ ան ատենը շատ մեծ բարիքներ ընդունելու ակնկալութիւն ունիմ . ինքը՝ արդարութեան պակ մը խոստացաւ բոլոր իրեն յայտնութիւնը սիրողներուն » . պատասխանեց միւսը : Եւ աս իր յոյսը աղէկ հիման վրայ ըլլալը հասկընալու համար : ծերունիին հարցուցինք թէ՝ «Ի՞նչ բանի վրայ է իր յոյսը» : Կամաց կամաց իր ակնոցը դրաւ : ու քովիկը դրած Եստուածաշունչը առնելով սա տեղը ցոյց տուաւ : «Եսկէ ետեւ ան հաւատքովը արդարացած ըլլալով՝ խաղաղութիւն ունինք Եստուծոյ հետ՝ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով . որով ընդունեցինք հաւատքով աս շնորհքիս մօտենալն ալ : որուն մէջը կեցեր ենք և Եստուծոյ փառաց յուսովը կը պարծինք» : (Հռով . Ե . 1 , 2)

Ո՛ր ուրեմն : աս ծերունի Յակոբին հաւատքը չունենայ : թէ և անթիւ հասարակութեան տէր ալ ըլլայ : տակաւին աղքատ է . և ո՛վ որ աս հաւատքը ունենայ : և «Եստուծոյ հարուստայ» : (Ղուկ . ԺԷ . 21) աշիկա՝ թէ և աղքատ Ղազարոսին : և աս ծերունիին պէս ալ ըլլայ աշխարհային բարիքներու կողմանէ : տակաւին ուրախ կը սեպէ ինքընքը : Եւ ինչպէս որ Եստուծոյ խոստմունքը անսուտ է՝ անանկ ալ իր յաւիտենական Ժառանգութիւնը անկորուստ և ստոյգ է : ու թագաւորական դահի մը՝ և թագի մը տալու կարող եղած փառքէն աւելի փառաւոր է : Եւ աղէկ է աս ծերունիին յոյսն ունենալ : քան թէ արքայական դաւաղան մը . և Ղազարոս

սին հնոտի լաթերն հագնիլ : քան թէ Մեծատունին ծիրանին : Հատ աղէկ է բարեպաշտութեամբ աղքատ ըլլալը : քան թէ հարստութեամբ կորսուիլը :

ՀՆԴԱՍՏԱՆԻ ՄԵԶ

ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՕԳԻԱԿԱՆ ՄԸ

Ենդղիացի քարոզիչներէն մէկը՝ հետեւեալ կերպով կ'ստորագրէ Հնդիկներէն դարձած իր մէկ օգնականին սրտաշարժ ընթացքը :

Եսկա անանկ մարդ մըն է որ՝ ո՛չ կրնայ գրել և ոչ ալ կարգալ , հեթանոսութեան մէջ մեծցած ըլլալով : Եւետարանին ուժը հասկընալով և զգալով՝ ուրիշներուն բարիք ընելու փափաք ունի . և ասոր համար շատ անգամ մէկ երկու տետրակ իր հետը կը տանի : Ղրժուարին բան մըն է յիրաւի՝ երբոր մէկը մտմտայ որ կարգալ չգիտցող մարդ մը աս տետրակները ինչպէս կրնայ օգտակար կեթպով գործածել , բայց աս մարդը կերպ մը գտած է : Երբոր Քալէթի այսինքն դատաստանատունը կ'երթայ գործի համար ու հոն կըսպասէ , երբեմն իր գօտիէն կը հանէ աս տետրակներէն մէկը՝ և պատուաւոր մարդուն մէկուն , կարելի է որ Պրահմանի մը ըլլայ , խնդիրք կ'ընէ որ՝ կարգայ անիկա : Պրահմանը կ'առնէ զանիկա բայց չէ թէ իր ձեռքէն , վասն զի ասանկ բան մը ընելով ինքը պղծուած կը համարուի . բայց մարդը տետրակը գետինը դնելով ու ետ քաշուելով , գոռոզ Պրահմանը առաջ կուգայ գետնէն կ'առնէ ու ինքն իրեն կը կարգայ : Ես բանը մեր բարեկամը գոհ չընելով կ'ըսէ որ՝ բարձր ձայնով կարգալու շնորհք ըրէ Պարոն , որ ըսածդ լսելով օգուտ քաղեմ անկէ » : Պրահմանը աս խնդիրքը կը կատարէ բայց շուտով գանգտել կ'սկսի որ՝ «Եպաշխարել , թողութիւն շնորհել , Երգարացընել» և այլ ասոնց նման օտար բառերուն ինչ ըլլալը ինք չգիտեր : «Ո՛հ Պարոն» կ'ըսէ միւսը «Թէպէտ և ես չեմ կրնար կարգալ , բայց կարծեմ աս բառերուն նշանակութեանը ինչ ըլլալը քեզի կրնամ իմացընել» : Եւ ան ատենը կ'սկսի բացատրել իրեն անոնց ինչընել ըլլալը . և ասանկով գրեթէ իր տալու քարոզին բնաբանը Պրահմանին կարդացընել տաւածի պէս կ'ըլլայ : Եւ տեղը գտնուող ուրիշ մարդիկն ալ հետաքրքրութեամբ դէպ ի աս կողմը կը ժողվուին և ուշադրութիւն ընող մարդոց բազմութեամբ փոքրիկ ժողովք մը կը ձևանայ :

Հիմայ պիտի պատմեմ թէ աս մարդուն ու

մէկ Պրահմանի մը մէջ ինչ պատահեցաւ օր մը որուն հետ նոյնպէս աս տեսակ հակաճառութեան պարագած էր : Պրահմանը քիչ մը տաք նալով, ըսաւ իրեն : « Ես ինչ յանդգնութիւն է քու ըրածդ . քեզի պէս ցած աստիճանի մարդ մը, որ ոչ կարգալ ու ոչ գրել գիտես, համարձակիս ինծի պէս գիտուն Պրահմանի մը ըսել որ՝ քու կրօնքդ ճշմարիտ ու իմ սուտ է : Ինչպէս կրնաս գիտնալ որ իմ սուտ է ու քուկդ ճշմարիտ » : « Թողութիւն ըրէ Պարոն » ըսաւ քաղաքավար կերպով մը, (ինչպէս որ բոլոր Հնդկաստանցիներուն սովորութիւնն է, և որոնք շատ քաղաքավար են՝ մինչև անգամ ամէնէն ցած աստիճան մարդիկը,) « Թէ որ քեզ նեղացուցի կը խնդրեմ որ ներես . բայց թէ որ թոյլտուութիւն ընես՝ քու հարցմունքիդ պիտի պատասխանեմ ուրիշ հարցմունք ընելով » : « Եւ շատ աղէկ, ըսէ նայիմ ինչէն » ըսաւ Պրահմանը : « Պարոն, դիցուք թէ սեղան նստած ատենդ երկու տեսակ կերակուր դնեն առջևդ, ինչպէս պիտի գիտնաս թէ անոնցմէ որն աղէկ է » : « Ետիկայ ինքնին յիմարական հարցում մըն է, անտարակոյս մէկ ճամբայ մը կայ գիտնալու, և ան ալ երկու կերակուրներուն ալ համը նայեն է » : « Եւ իտակ է ըսածդ Պարոն » ըսաւ միւսը : « Եւ թողութիւն ըրէ որ ըսեմ թէ՛ ատ ճամբով ես ալ գիտեմ որ իմ կրօնքս ճշմարիտ ու քուկդ սուտ է : Ես ատեն մը հեծանոս էի, և ան կրօնքին համալ առած էի . հիմայ ալ քրիստոնեայ եմ, ու անոր ալ համը առած եմ . և թէ որ Պարոն՝ միայն ան էր ինչպէս հարցնէի, ինչպէս որ ես ալ ըրի, ստոյգ գիտեմ որ դուք ալ ինծի համախոհ պիտի ըլլաք »

ՈՒՆԱՆՑ ԶՈՒՄԹ ԲՆԱԿՈՐՈՒԹԻՒՆԸ

Մէկ տիկին մը՝ շատ մեծ օգնութիւն ըրած կ'ըլլայ իր երկանը դործին մէջը, թէ որ շարունակ զուարթ դէմք մը ցուցնէ անոր : Իւրիկ մարդուն թշուառութիւնն ու տխրութիւնը հարիւրապատիկ աւելի կ'ըլլայ, թէ որ իր կենակիցը խոժոռ դէմք մը ունենայ : Օրարթ ամուսին մը՝ երկինքէն երեցած ծիրանի գօտին կը նմանի, իր երկանը միտքը՝ մրկալից փոթորիկներէ ալէկոծեալ նաւու նման, ծովուն անդունդին մէջ ծփացած ատենը : Բայց դժգոհ և դիւրագրգիռ կ'ին մը՝ մարդուն նեղութեան ատենը, ան թանցրամած մութ ամպերուն կը նմանի՝ որ շարունակ փոթորիկ ելլելուն նշան մը սեպուելով, ահուդողի մէջ կը ձգէ մարդը :

ՎԱԳՐԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՏՂԱՅՈՑ ԶԱՄԱՐ

Հնդկական Հնդկաստանի տէրութեան երկրաչափներէն մէկը՝ օր մը անանկ տեղ մը կը չափէր, որ Հնդկներուն լեզուով « Նընկըլ » կ'ըսուի . այսինքն ծառերով ու թուփերով եղէգներով ու խոտով լեցուն տեղ մը, որոնք ան տաք երկրին մէջ շատ կը բուսնին ու կ'աճին : Եւ որովհետեւ ասանկ տեղուանքը վայրի գազաններ շատ կ'ըլլան, իրեն օգնութիւն ընող մարդիկը կրակ վառեցին տեղ տեղ, և հրացան պարպեցին, շուները ներս քշեցին, և բարձր ձայնով աղաղակ փրցուցին, և ալ ուրիշ ինչ որ կրնային ընել զանոնք ամէնը ըրին՝ գազանները փախընկելու համար : Եւ ասոնք ըլլալէն ետեւ՝ ալ վտանգ չկայ կարծելով, աս տեղին մէկ կողմէն մարդը ներս քալեց, ու դէպ'ի մէկ բլուր մը կ'ելէր որ անկէ բոլոր տիքն եղած երկիրը զննէ . բայց երթալու ատենը, իմացաւ որ տակի հողը ներս ներս կը պարպուէր . իր ոտքը ետ առնելուն և հաստատուն կայանի մը վրայ դնելուն, և կամ ուրիշ կերպով մը ինքզինքը աս տեղէն ազատելուն ջմաց, մացառներուն մէջէն դէպ'ի վար սողեցաւ . և իր բոլորտիքէն թանձր ամպի պէս փոշին վեր ելաւ, որուն պատճառով քանի մը բոպէ ուր ըլլալը չկրցաւ տեսնել : Ու թէեւ ուր ըլլալը չէր տեսներ, բայց զինքը ահու դողի մէջ ձգելու չափ բան լսեց : Վայրի գազանի ցած ձայնով մոնչել (Ինչէ-է-) մըն էր լսածը, և կը հասկընար որ անոնց որջը ինկած է : Եւ կարծիքը շիտակ ըլլալը հաստատուեցաւ . վասն զի փոշին վեր ելլելը անցնելէն ետեւ, ինքզինքը վագրի ձագերուն քովը դուռ : Բանը աս էր որ ճերմակ մրջինները՝ որոնք խիստ շատ են Հնդկաստանի երկիրները, գետնին տակը պարպած էին . և եղանակը շատ չոր ըլլալուն, վագրին որջին վրայ ծածկած բարակ կեղևի պէս մնացած հողը, մարդը ոտքը վրան դնելուն պէս իջաւ :

Հիմա ընթերցողը կրնայ քիչ շատ երեւակայել թէ՛ աս խելջ մարդը ինչ վիճակի մէջ կրնար ըլլալ ասանկ փորձանաւոր տեղ մը ինկած ըլլալը տեսնելով . և ինչ եղաւ ու ինչ ըրաւ կը կարծես աս վտանգաւոր պա-

բազային մէջ : «Երեսին գոյնը նետեց , մոխիր կտրեցաւ» պիտի ըսես , «ու ձեռքը ոտքը դողալ սկսեց , ու որչափ որ ձայն ունէր աղաղակեց որ իրեն օգնութեան հասնին» : Չէ , չէ ատանկ բան մը չըրաւ ամենեւին : Իր ինչ վտանգի մէջ ըլլալը տեսաւ յիրաւի , ու թէև զարհուրեցաւ , բայց բարեպաշտ մարդու մը վայլածին պէս՝ Աստուծոյ աղաչեց որ զինքը պահպանէ , ու խելացի մարդու մը պէս ալ՝ գալիք աւելի գեղութիւններուն ինքզինքը պատրաստեց : Որջը ինկած գազանին բնութիւնը գիտնալով , հասկըցաւ որ եզ վազրին այսչափ մօտ ըլլալուն՝ անկալի որոտքը եկած որսը ճանկէն չփախցընէ պիտի ամենեւին : Ուստի ինչ կրնար ընել : Ինքը ոչ հրացան ունէր , ոչ թուր , ու ոչ ալ փատ մը անգամ ունէր իր ձեռքը : Իրեն պաշտպանութեան համար գործածելու բանը , մինակ իր ձեռքնէն էին : Բայց առանց զէնքի ինչ կրնայ ընել : Ա՛հ՝ ձեռքը զարմանալի գործիք մըն է , երբոր խելքով գործածուի : Ասանկ ըլլալը աս պարագային մէջն ալ փորձուեցաւ :

Վայրկեան մը մտածելէն ետեւ՝ շուտով մը իր քովի երկու իրեք մետաքսէ դաշիկնակները հանեց , ու ամուր մը ոլրեց՝ աջ թևը փաթթեց մինչև արմուկները : «Բայց ասիկայ ինչ օգուտ ունի» կ'ըսես թերևս : Հիմա պիտի տեսնես : Սողմոնին ըսածին ճշմարիտ ըլլալը հոս ալ ստուգուեցաւ . թէ «իմաստութիւնը հովանաւորութիւն կ'ընէ» : Աս ըրածը մարդուն կեանքը ազատեց : Որովհետև հազիւ թէ աս գործը լմնցուց , ինչ կընայիս՝ մէյմ՝ ալ վազրն է տեղէն ելլալ , ու թուփերուն և եղէգներուն վրայէն ցատկեց մէկէն 'ի մէկ , ու գէպ 'ի իր վրան վազելով՝ աչքէն կրակ կը ցատկէր , ու անոր բացած ահագին ճանկերը , զինքը բռնելը ու փառատելը մէյմը պիտի ընէր : Ասիկա շատ սոսկալի տեսարան մը չէր արդեօք : Որուն միտքէն չանցնիր թէ՛ ասիկա բաւական է որ և իցէ քաջ մարդը ձայնը հասածին չափ կանչուողով տալու , և փախչելը նայելու : Բայց աս մարդը գիտէր որ անկէ օգուտ մը չիլէր , և անկարելի է ասանկով ազատելը . և մանաւանդ որ աս ընելովը աւելի շուտով իր կորուստին պատճառ պիտի

ըլլար : Ուստի եղած տեղը հաստատ կեցաւ , ու պատրաստուեցաւ ամենայն զօրութեամբ կռուելու իր ահաւոր թշնամիին հետ : Աս պատմութիւնը կարթալու չափ ժամանակ չքշեց՝ իր եղած տեղն եկաւ հասաւ վագրը , փորը գետինը ծռելով ու սողալով մը , ինչպէս որ կատուն որսը բռնելու ատենը կ'ընէ՝ որ չփախցընէ զանկայ : Սոսկալի տեսարան : Բայց խեղճ մարդը ասոնց վրայ մտմտալու ժամանակ չուներ . վասն զի րոպէէ մը մոնչալու ահարկու ձայնով մը վրան ցատկեց : Իր միտքէն անցածին պէս եղաւ . գազանին թաթերը բաց էին բոլորովին . և շուտ մը ակնթարթ վայրկեանի մը մէջ՝ բոլոր զօրութիւնովը քաջ մարդը ձեռքը գազանին բերանը խօթեց ու լեզուն բռնեց , և կրցածին չափ կ'ողէր մէկ կողմէն մէկալ կողմը . աս ընելովը չկրցաւ գազանը բերանը գոցել , բայց իր ճանկերովը ահագին կերպով կը պատերազմէր . և անանկ ըրաւ որ մարդուն վրայի լաթերը պատառ պատառ ընելէն ետքը , միտքն ալ փզտեց ու ոսկորներէն փրցուց հանեց : Ասոսկալի վիճակին մէջ արիւն թաթին ըլլալով ալ , գազանին լեզուն ամուր բռնեց . ու ասիկա այնչափ ցաւ տուաւ գազանին որ՝ վերջապէս վախ ինկաւ վրան , ու յանկարծ ետ քաշուելով ձեռքէն աղատեց լեզուն , և դէպ 'ի մացառներուն մէջ փախաւ : Մարդը ուրախութենէն քանի մը րոպէ կանկ առաւ , և զինքը վագրին ճանկերէն ազատող Աստուծոյն շնորհակալ եղաւ , որ Գաւիթը առիւծէն և արջէն ազատողին ողորմութեամբը՝ աս սոսկալի վտանգէն ինքն ալ ազատեցաւ . և թէպէտ կը մարմնէր վէրքերուն ցաւէն և վազած արիւնէն , բայց շուտով ընկերներուն քովը գնաց՝ որ չըլլայ թէ գազանին վախը անցնի ու նորէն իր որջը դառնայ ու յարձակում մըն ալ ընէ վրան :

ԱՆՆԱՅԻՄԻ ՄԸ ԴԱՆԱՆՈՒԹԻՒՆԸ . Սկստիկեան գաղափարներ ունեցող երիտասարդին մէկը՝ հուսկաւոր աստուածաբանի մը հետ օր մը խօսակցելու ատենը , աս խօսքը զրուցեց թէ իր չհասկըցած բանին ամենեւին չէր հաւատար : Որուն միտքը աս պատասխանը տուաւ . «Ուրեմն բոլոր իմ գիտցած մարդոցս դաւանութենէն համառօտ պիտի ըլլայ քուկդ» :

ԵՐԱԶ

Մարդ մը կրնայ երազ տեսնել, երբոր քնացած ատենը ականջն ի վար փափսալու ըլլան : Եսոր զուարճալի մէկ օրինակը վաւերական տեղերէ տունուած է, և որուն ճշմարտութեանը ականատես հաւատաւրիմ պատմիչ մը վկայութիւն բրած է մանրամասնաբար :

Մեր վերը գրած կերպովը երազ տեսնող անձը գինուորական կարգի պաշտօնեայ մըն էր . և աս մասնաւոր յատկութիւնը ան աստիճան վրան տիրած էր որ՝ նաուռ մէջ իր հետը ճամբորդութիւն ընող ընկերները շատ հեղատով կը զուարճանային : Ընոնք կրնային որ և իցէ կերպ երազ տեսնել տալ իրեն, միայն ականջն ի վար նոյն բանը փափսալով մը . ու մասնաւորապէս աւելի յաջող ու աղէկ կ'ըլլար՝ երբ որ իրեն բարեկամներէն մէկը ընէր, որուն որ ձայնը իր ականջին սովորական էր : Ընգամ մը աս խեղճին մէկ կուիւի մը սկիզբէն մինչև վերջը երազել տունին, որն որ վերջապէս մենամարտութեամբ (ֆուէլ) լմնցաւ . ու երբոր աս երազած կարծեցեալ թշնամին ու ինք երկու կողմէն իրարու դէմ ելան, ասոր ձեռքը ատրճանակ (փլիթ) մը տունին, որնոր ինքը պարպելով ձայնէն արթնցաւ : Ուրիշ անգամ մըն ալ նոյն ճամբորդութեան ատենը՝ նաուռն մէջ սնտուկի մը վրայ պառկած էր, և իրեն անանկ հաւտացուցին որ նաւէն ծովը ինկեր է, և խրատ կու տային որ լողալով ինքզինքը ազատէ : Կաւ ըսին ալ թէ մէկ մեծ շանաձուկ մը ետեւէն ինկեր է զինքը որս պիտի ընէ, և կը խրատէին զինքը որ խորատոյզ (ֆուլ) ըլլայ իր կեանքը ազատէ : Ընմիջապէս ինքը ըսածնուն պէս բրաւ, և անանկ ուժով մը ըրաւ աս բանը որ՝ ինքզինքը նետեց սնտուկին վրայէն ու գետնին վրայ ինկաւ . և ասկէց քնատուելով մէկէն արթնցաւ : Յամաքը ելեւէն ետեւ, բարեկամները դտան որ ինքը վրանին մէջ պառկած է, ու թնդանթնեան ձայնէն շատ նեղուած, ու անհանգիստ կ'երևար :

Ուստի աս տեսնելով իրեն հաւտացուցին որ՝ ինքնալ նոյն ատենը պատերազմական գործողութեան մէջ է . ասոր վրայ շատ մեծ վախ ցուցուց և փախչելու ալ յայտնի հակամիտութիւն մը : Իրենք ըսին թէ պէտք չէ որ փախչի . բայց միև նոյն ժամանակը խեղճին վախը աւելցուցին՝ պատերազմին մէջ զարնուողներուն, հոգեվարքներուն լայն ու գուռումը ձեւացնելով . և երբ որ ինքը հարցուց՝ ինչպէս որ շատ անգամ սովորութիւն ունէր, թէ որոնք են ինկածները՝ անոնք ալ ճիշդ իրեն մասնաւոր բարեկամներուն անունը կու տային : Վերջապէս ըսին իրեն որ իրեն կարգը կայնող քովի ընկերը ինկաւ . ասոր վրայ անկողնէն մէկէն ցատկեց, ու վրանէն դուրս վաղեց փախաւ, և աս վտանգէն ու տեսած երազէն արթնցաւ, վրանին դուրսի չուաններուն վրայ իյնալով : Ես հեղուան գլխաւոր մէկ պարագան աս էր որ՝ երազին բաները որոշ միտքը չէր դար և յոգնած ալ չէր . և ըսաւ իր բարեկամներէն մէկուն թէ՝ ինք հաստատ զիտէր որ իրեն հետ կատակ կ'ընէին : Եսոր նման ուրիշ օրինակներ ալ պատմուած են :

Ըն երազներուն մէջ՝ որ ձայն հանելուն միջոցով կ'ըլլայ և նոյն ատենը կարթննան, տարօրինակ իրողութիւն մը երևան ելաւ . այսինքն թէ՝ մարդը արթնցնող ձայնը, միանգամայն երազն ալ տեսցնել կու տայ, և իրեն անանկ կու դայ որ շատ մը ժամանակ անցեր է : Ես հետեւեալ պատմելիքնիս ան տեսակներէն մէկն է որ հաւատարիմ տեղաց լուած է : Պարոնին մէկը երազ տեսաւ որ զննուոր գրուեր էր ու որոշուած գունդին հետ միացեր, փախեր ու բռնուեր և ետ տարուեր ու դատաստանի հանուեր, դատը տեսնուեր և դատապարտութեան վճիւր տրուեր էր որ հրացանով զարնուի, և գուրա տարուեր էր որ սպանուի : Սովորական պատրաստութիւնները լմնալէն ետեւ՝ հրացան մը պարպուեցաւ ու ասոր ձայնէն արթնցաւ . ու գտաւ որ քովի սենեակէն եկած ձայնը՝ թէ ան երազը պատճառեց և թէ զինքը արթնցուց : Երազն մէջ ժամանակի

մեջոցի վրայով ճիշդ որոշմունք մը չկըր-
նալ ըլլալը կը հասկցուի նաև ուրիշ
դէպքերով ալ :

Պարոնին մէկը , կ'ըսէ մեր վերոգրեալ
պատմիչը՝ խոնաւ տեղ մը քնանալէն ետեւ
երկար ատեն խեղդուելու զգացում մը ու-
նէր , երբոր կռնակի վրայ քնանալու ըլ-
լար . և աս ալ միշտ միօրինակ կը պատա-
հէր անանկ պառկած ատենը որ՝ երազին
մէջ կմախք մը կը տեսնէր , որ իրեն կո-
կորդը սաստիկ մը կը սխմէր : Վստած տեղը
հանգիստ կը քնանար . և զանազան փորձ
փորձելէն ետեւ՝ իր ետին պաշտորդ դնե-
լով , ապապրուած էր որ եթէ նստած տե-
ղէն պառկելու ըլլայ , իրեն ձայն տայ և
արթնցնէ : Ենզամ մը աս կմախքին հետ
երկար կռիւի մը բռնուեցաւ , և շատ եր-
կար կռիւ մը եղաւ մինչև իր արթննալը :
Ետքը երբ որ արթնցաւ՝ պաշտորդին վը-
րայ կը ձգէր յանցանքը թէ ինչու այնքան
երկար ժամանակ զինքը թողուց որ այնպէս
տանջուի . և մարդը կ'ըսէր թէ անմիջապէս
ձայն տուած էր իրեն պառկել սկսելուն
պէս : Ըս վիճակէն ազատեցաւ մարդը
երկար ժամանակ քաշելէն ետեւ աս ներդու-
թիւնները :

ԼԻՐԱՆ ԵՒ ՄՈՒՐԱՑԿԱՆԸ . Աղքատ մուրաց-
կանին մէկը՝ Բնագիտի երեւելի գիտնականներուն մէկէն
հինգնոց մը (վիկէ) ուղելով , ան ալ սխալմամբ ոսկի լեթա
մը տուաւ : Խեղճ մուրացկանը աս բանը հասկնալով , կաշի
'ի կաղը ետեւէն կը վազէր որ ոսկին նոտայ . ասոր վրայ
Պարոնը կը ինն տուաւ ոսկին , և իբրեւ հատուցում
մը իր համեստութեանը , վրան մէկմն ալ աւելցուց աս
խօսքը ըսելով . համեստութիւնը իրեն ինչպէս բնական
ընտրած է . աւելի կ'ուզեմ՝ աս մարդուն նման ըլլալ ,
քան թէ անհամեստ թագաւոր մը :

ՀԻՔԱԿԱՆ ԱՌԱՑ ԻՐԸ . Հրեից առածին մէկն էր
աս թէ՛ Ըն որ իր զաւակը համեստ դործի մը մէջ չվարժէր
դող ըլլալու համար վարժած կ'ըլլայ :

ՊԱՏԱՆԵԱՑ ԽՐԵՏ : Ո՛վ որ որ գերազանց
ըլլալը իրեն նպատակ կը դնէ , միջին աստի-
ճանէն անդին կ'անցնի . և ո՛վ որ միջինը
կ'ընտրէ , անոր ալ չհասնիր , այլ անկէ վար կը
մնայ :

ԳԵՐԵԶՄԱՆԻՆ

ԲԱԶՄԱՄԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Աշխարհս եկած գացած մարդոց վրա-
յով զանազան հաշիւներ եղած է . և աշ-
խարհիս բազմամարդութիւնը ութը հարիւր
միլիոնէն մինչև հազար միլիոն գնողներ
կան . մենք միջին հաշուով մը (946,080,000)
ինը հարիւր քառասուն և վեց հազար ութ-
սուն միլիոն գնելով , կը գտնենք թէ մէկ
երկվայրկեանին մէջ՝ մէկ հոգի կը ծնի . ու
մարդկային կենաց շրջանը 30 տարի սեպե-
լով՝ հետեւեալ աղեւսակին մէջ կը տեսնենք
թէ որչափ մարդ աշխարհք կու գայ և կը
մեռնի այնչափ միջոցին մէջ :

Ըմէն մէկ երկվայրկեան	1
„ Բոլե	60
„ Ժամ	3,600
„ Օր , 24 Ժամ	86,400
„ Շաբաթ , 7 օր	604,800
„ Եփս , 30 օր	2,592,000
„ Տարին , 365 օր	31,536,000
„ Շրջան կենաց 30 տարի	946,080,000

Ըսկէ զատ հաշիւ եղած ալ է որ՝ Քրիստոսի
ծննդեանէն մինչև հիմա աշխարհք եկող գացող
մարդոց միջին գումարը . (31,000,000,000)
երեսունուամէկ հազար միլիոն եղեր է . որուն
վրայ ներկայ ենթադրեալ բազմամարդու-
թիւնն ալ աւելցնելով , կ'ըլլայ բոլոր գու-
մարը (31,946,080,000) երեսունուամէկ հա-
զար ինը հարիւր քառասուն և վեց միլիոն
ութսուն հազար . ուսկից կը հետեւի թէ մա-
հը և գերեզմանը՝ կենդանի մնացողներուն
վրայ (30,053,920,000) երեսուն հազար յի-
սուն ու իրեք միլիոն ինը հարիւր քսան
հազար առաւելութեամբ յաղթութիւնը
ըրած են :

Հետեւեալ աղեւսակը կը ցուցնէ թէ՛
գերեզմանին մէջի բոլոր աս բազմամարդու-
թիւնը ինչ տեսակ մահուամբ մեռած են :
Պատերազմի մէջ 9,000,000,000
Պոլէ և Ժանտամահէ 7,920,000,000
Պարտիրոսութեամբ 500,000,000
Պիւնեմըութեամբ 580,000,000
Բնական մահուամբ , և 13,000,000,000

ՊԶՏԻԿ ԲԱՆԵՐ : Եռուները՝ պղտիկ բաներ են , բայց մեծ գետերուն աղբիւրներն են . ղեկը՝ պղտիկ բան մըն է , բայց նաւուն ընթացքը ան կ'ուղղէ կը շտկէ . սանձը՝ պղտիկ բան մըն է , բայց նայէ տես անոր ուժն աւ գործածութիւնը . գամերը՝ պղտիկ բաներ են , բայց անոնք են ամէն մեծամեծ շէնքերը մէկտեղ բռնողը : Մէկ խօսքը՝ մէկ նայուածքը՝ մէկ ծիծաղը , կամ խոժոռ դէմքը , ամէն ալ պղտիկ բաներ են , բայց մեծ ուժ ունին թէ չար և թէ բարի աղբիւր : Սոմտոս ասոր վրայ

և պղտիկ Բաները զանց մի՛ ընեն : Ըն պղտիկ պարտքդ վճարէ . խոստումնք մըն է , կատարէ զանիկա . թէ որ շուրուշ մըն ալ է միայն տո՛ւր տերոջը . չես գիտեր որ ինչ կարեւոր բաներ անկէ կ'ախուժն ունին : Վրու տուած խօսքիդ վրայ հաւատարիմ՝ եղիր , թէ և տղեկի մըն ալ ըլլայ տուած խօսքդ . անոնք ուրիշներէն աւելի միտքերնին կը պահեն աս բրածդ , և անոր հետեանքը կարելի է որ մինչև 'ի մահ տեսէ : ՆԿԱՏԷ՛ ՊԶՏԻԿ ԲԱՆԵՐԸ :

ՅԵՆԿ ՆՈՐԵՏԻՊ ԳՐՈՅ

Նետեալ Նորատիպ Գիրքերը կը գտնուին Բրոթէսթանդից Պօլսոյ Գրքատունը , և այս Տէրութեան ուրիշ գլխաւոր քաղաքներուն մէջ գտնուած Բրոթէսթանդից Գրքատունները :

Եստուածաշունչ	Եշխարհաբառ	Սիահատոր	Հասարակ կազմով	Պարտու	40
			Փառաւոր	"	60
			Ոսկեզօծ	"	100
Ճառ Սրտին պահպանութեանը վրայ	Թղթակազմ			"	3
			Կաշիով	"	5
Վարք Հելուետացի Բարեկարգչին	Օուինկի			"	1 : 20
Կարեւոր Հարցումներ և Սուրբ Գրքէն բերուած վկայութիւններով	Պատասխաններ			"	20
Ընձնաքննութիւն Կա՛ Քննէ ինքզինքդ թէ արդեօք Վրիստոնեայն ես				"	1
Գլուխ եկեղեցւոյ . Երկրորդ տպագրութիւն				"	1
Իւրահիւր . Ելլահըն ի պատէթիստէ ումու՛մի վէ մախսուսիյէ ճէմիյէթլէրաէ	օգունմագ իչիւն :			"	3

Սօտելա պատրաստ ըլլալու գրեանքը

Նոր Կտակարան Գրաբառ
Վրիստիանոսին Ճամբորդութիւնը . Նորոգ սրբագրութեամբ վերստին տպուած և նոր պատկերներով զարդարուած :
Փէյլամպէրլէրին Էօմրիւնիւն նազլիյէթի :
Իլմի բագամ քիւչիւք մէթէպ չօճուգլարը իչիւն :

Հտեմարանին Տարեկան գինը 18 շուրուշ կանխիկ , կամ ամէն մէկ ամսական տետրակին գինը 60 փարայ է :

Գործերը իրիւ-էլու փօսպային ծախքը աւանդէն վրայ է :
Փօսպային ծախքը ինայել ուղղութիւնը կրնան Տաճկաստանի որ և էջէ թաղաքները եղած Բրօւլէսթանդ գրքատաններուն թով գրանէլ :